ԲԱՆԱՁԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ (8.05.1990 Թ.)

Ասված է. «ԶԳՈՑԵԼ ԵՂԷՔ ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻՑ, ՈՐՈՆՔ ԳԱԼԻՍ ԵՆ ԴԷՊԻ ՁԵԶ ՈՉԽԱՐՆԵՐԻ ՁԳԵՍՏՆԵՐՈՎ, ԲԱՅՑ ՆԵՐՍԻՑ ՑԱՓԾՏԱԿՈՂ ԳԱՅԼԵՐ ԵՆ: ԻՐԵՆՑ ՊՏՂԻՑ ԿԾԱՆԱՁԵՔ ՆՐԱՆՑ. ՄԻԹԵ ՓԾԵՐԻՑ ԽԱՂՈՂ ՈՒ ՏԱՏԱՍԿԻՑ ԹՈՒՋ ԿՔԱՂԵՆ»:

Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ իշխանությունների երկու տարվա գեղեցիկ խոսքերն ու որոշումները ոչ միայն չհանգեցրին խնդրո լուծմանը, այլ, ընդհակառակը, ուժեղացրին լարվածությունը և ռեգիոնը կանգնեցրին ազգամիջյան պատերազմի եզրին: Օտար և քրիստոնեությանը թշնամի իշխանության լծի տակ տնքացող Ղարաբաղի հինավուրց քրիստոնեական հողում գրեթե ամեն օր ավերվում են քրիստոնեական հավատքի հուշարձանները, պղծվում են տաճարները, ծաղրուծանակի, տառապանքների ու հաղածանքների են ենթարկվում հնագույն քրիստոնեական ժողովուրդներից մեկի՝ հայերի ուստրերն ու դուստրերը: Նրանց իրավունքներն ու ազատությունները ամեն օր ոտնահարվում են: Անտանելի պայմաններ են ստեղծված քրիստոնյա ժողովրդի կյանքի համար, որն ստրկացված է Ադրբեջանի իշխանությունների և նրանց օգնող խորհրդային բանակի կողմից:

Կենտրոնի հատկացրած 500 միլիոն ռուբլին, որը նախատեսված էր մեծամասնությամբ հայերով բնակեցված այդ մարզի տնտեսական ու սոցիալական դրության բարելավման համար, հանձնվեց Բաքվի իշխանություններին: Այդ գումարը հիմա տենդագին օգտագործվում է ադրբեջանական Խոջալու, Շուշի և այլ բնակավայրերի շինարարության համար: Ադրբեջանական իշխանությունների մտահղացմամբ 80 հազար ադրբեջանցիներին Խոջալուում բնակեցնելը հնարավորություն կտա արմատապես փոխել Ղարաբաղի ժողովրդագրական կարգավիճակը, որից հետո կարելի կլինի անցկացնել այսպես կոչված «հանրաքվե», որից հիմա Կենտրոնը համառորեն հրաժարվում է:

Գեներալ Սաֆոնովի զորքերը ապրիլի 24—26-ին գանահարել են խաղաղ ցուցարարներին, որոնք հավաքվել էին 1915 թվականի հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար: Կան սպանվածներ ու վիրավորներ: Ձերբակալվել են հայ մտավորականության ներկայացուցիչներ: Ստեփանակերտի փողոցներում պարեկում են հրասայլերն ու զրահամեքենաները, որոնք դատարկ փամփուշտներով կրակում են քաղաքի բնակչությանն ահաբեկելու նպատակով:

Այդ ռեգիոնից կենտրոնական մամուլում ստացվող բոլոր փաստերը իշխանությունների կողմից մանրամասն ու կանխամտածված խեղաթյուրվում են և կեղծվում Բաքվում ու Կենտրոնում: Ըստ երևույթին, Կենտրոնը ու Բաքուն համայն աշխարհի ուշադրությունը գրաված Լիտվայի իրադարձությունների աղմուկի տակ փորձում են Ղարաբաղի բնակչության մի մասի վերացման ճանապարհով վերացնել Ղարաբաղյան հիմնահարցը:

Քրիստոնեադեմոկրատական միության խորհրդաժողովը դիմում է Ղարաբաղի հայ բնակչությանը. «Եղեք զգոն, պահպանեցեք հավատքը, եղեք քաջարի, ուժեղ: Թող ամեն ինչ սիրով արվի ձեզ մոտ»:

Խորհրդաժողովը դիմում է կենտրոնական իշխանություններին, բողոքելով հակամարդկային միջոցների դեմ, որոնք ըստ էության նպատակամղված են քրիստոնեական հնագույն մշակույթի կրող ժողովրդի ներկայացուցիչների ոչնչացմանը: Ասված է. «Իսկ ով անարդար վարվի, նրան կհատուցվի ստի համար. Նա աչառու չէ»: